ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ՊԵՏԻ

ՀՐԱՄԱՆ

Թիվ 5-Լ

ՀՀ ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ՊԵՏԻ 14.07.2018Թ. ԹԻՎ 2-Լ ՀՐԱՄԱՆՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն ՀՀ վարչապետի 11.06.2018թ. «Հայաստանի Հանրապետության ոստիկանության կանոնադրությունը հաստատելու մասին» թիվ 751-Լ որոշմամբ հաստատված հավելվածի 20-րդ կետի 7-րդ և 8-րդ ենթակետերի

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ՝

1. ՀՀ ոստիկանության պետի 2018 թվականի հուլիսի 14-ի «ՀՀ ոստիկանության գործունեության բնագավառների, գործառույթների և դրանք ապահովող կառուցվածքային ստորաբաժանումների, ոստիկանության ենթակայությանը հանձնված կազմակերպությունների գործունեության համակարգումը և Երևան քաղաքի ու մարզային վարչությունների սպասարկումը ՀՀ ոստիկանության պետի և նրա տեղակալների միջև բաշխելու, ՀՀ ոստիկանության պետի 31.05.2018թ. թիվ 1640-Ա հրամանն ուժը կորցրած ճանաչելու մասին» թիվ 2-Լ հրամանի՝

1) 1-ին հավելվածի 1-ին կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«**1. ՀՀ ոստիկանության պետ, ոստիկանության գնդապետ Վ. Օսիպյան.**

1) Բնագավառներ. ոստիկանության օպերատիվ-հետախուզական ստորաբաժանումների գործունեության աջակցության ապահովում, ոստիկանության ստորաբաժանումների գործունեության օրինականության նկատմամբ հսկողություն, ծառայողական կարգապահության նկատմամբ ընդհանուր վերահսկողություն, ներքին աուդիտի իրականացում, կադրային քաղաքականության մշակում և վարում, հասարակայնության հետ կապեր և ՀԼՄ-ների հետ համագործակցություն, գործավարության կազմակերպում, գաղտնիության ռեժիմի ապահովում, հերթապահ մասերի գործունեության կազմակերպում, ձերբակալված և կալանավորված անձանց պահելու կազմակերպում:

Ստորաբաժանումներ. օպերատիվ-փնտրողական վարչություն, շտաբ (ոստիկանության պետի տեղակալների համակարգմանը չհանձնված մասով), ներքին անվտանգության վարչություն, կադրային քաղաքականության վարչություն, ոստիկանության պետի աշխատակազմ, ներքին աուդիտի վարչություն, հասարակայնության հետ կապի և լրատվության վարչություն:

2) Բնագավառներ. հասարակական կարգի պահպանություն և հասարակական անվտանգության ապահովում, համայնքային ոստիկանության համակարգում, օբյեկտների պետական պահպանություն, պաշտպանության ենթակա անձանց պահպանություն, զորահավաքային աշխատանքներ և քաղաքացիական պաշտպանություն, լիցենզավորման և թույլտվության աշխատանքների կազմակերպում, դրանց նկատմամբ հսկողության իրականացում, ձերբակալված և կալանավորված անձանց ուղեկցելու կազմակերպում ու իրականացում:

Ստորաբաժանումներ. պետական պահպանության գլխավոր վարչություն, հասարակական կարգի ապահովման վարչություն, ճանապարհային ոստիկանություն (ճանապարհապարեկային ստորաբաժանումների ընթացիկ գործունեության մասով), զորահավաքային աշխատանքների և քաղաքացիական պաշտպանության բաժին:

Գործառույթներ. ՀՀ ոստիկանության պետի համակարգման տակ գտնվող կառուցվածքային ստորաբաժանումների կանոնադրությամբ նախատեսված գործառույթներ:»,

2) 1-ին հավելվածի 5-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.
«**5. ՀՀ ոստիկանության պետի տեղակալ,**»,

3) 2-րդ հավելվածի 4-րդ և 5-րդ կետերը շարադրել հետևյալ խմբագրությամբ.
«**4. ՀՀ ոստիկանության պետի տեղակալ,**

5. ՀՀ ոստիկանության պետի տեղակալ, ոստիկանության գնդապետ Վ.Մովսիսյան.
1) ՀՀ ոստիկանության Շիրակի մարզային վարչություն,
2) ՀՀ ոստիկանության Լոռու մարզային վարչություն,
3) ՀՀ ոստիկանության Արմավիրի մարզային վարչություն,
4) ՀՀ ոստիկանության Գեղարքունիքի մարզային վարչություն:»:

2. Հրամանը հայտարարել ՀՀ ոստիկանության բարձրագույն, գլխավոր, ավագ և միջին խմբերի պաշտոններ զբաղեցնող ծառայողներին:

ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ԳՆԴԱՊԵՏ Վ. ՕՍԻՊՅԱՆ

«28» 03 2019թ.
ք. Երևան